

Երազանքեն ժըպտելով:

Շարժմամբ աճած, աղուոր, զօրեղ իր մարմնեն

Արիւնը խուլ դըղըջիւնով կը հոսի.

- Կարմիր հեղեղ, սըրտի ձորէն վար իջած -

Տափանն ու թին ներկելով

Կ'երթայ գուղձերն ողողել.

Ակօսներուն մէջ զետեղել լիազօր

Կարողութիւն մ'արեգակի, անձրեւի.

Թափանցել մութ ծոցն երկրին,

Իբրեւ ըլլար մարգարէի մըտածում,

Եւ հոն ճըռգած հունտերուն մէջ ներշնչել

Ուռչում մ'ատոք եւ առոյգ,

Դարձընելով կեանք մ'իր առջի օրոցքին,

Նոր ծաղկումի մը համար,

Եւ հոն հըծծել նախնիքներու փոշիին

Թէ - միւսչեւ ե՞րբ իր արեամբ

Յայ գիւղացին պիտի արտն իր ոռոգէ:

Կը լըռէ շուրջն ամեն իր:

Լուսնին լացող աչքերուն

Ամպերը թուխ թաշկինակներ կը դառնան.

Խաւարն հոծ է, սեւ պատանք:

Յեռուն կնոջ մ'հոգին տարտամ կասկածով

Գիշերուան մէջ կը սպասէ.

Ջուխտ որդիներն ինկած ծունկին զըգուանուշ

Յոյսի մը մէջ վաղամահ, զերդ ծիածան,

Յեծկըլտանքնին կը խեղդեն:

...Ահե՛ղ հանգիստ. դիակին քով արիւնոտ

Կեանք մը ծաղկի, աստղի առկայծ ճաճանչներ,

Չոյգ մը բիբեր, զոյգ մ'հոգեվարք կայծոռիկ,

Արտին մէջ շունչ մ'հովերու

Մեռնող սուրբի մ'հուսկ սաղմոսին պէս տըխուր,